Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/26 ՀՀ Սյունիքի մարզի գ. Գորայքի միջնակարգ դպրոցի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 08.10.2025թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մնացականյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Ղազարյան
Ա. Հյուսիսյան
Է. Առուսատմյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Ա. Նալբանդյանը

1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտի ուսումնասիրության մասին

(Հ. Մնացականյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակից «ԵՎՐՈՍՏՐՈՅ», «ՍՄ ՊՐՈԴԱԿՇՆ» և «ԳՈԼԴ ԼԱՅԹ» ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/26 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4 դեմ-0:

2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի վերաբերյալ

(Հ. Մնացականյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները՝ «ԵՎՐՈՍՏՐՈՅ», «ՍՄ ՊՐՈԴԱԿՇՆ» և «ԳՈԼԴ ԼԱՅԹ» ՍՊԸ-ների կոնսորցիումի հայտը գնահատվել է բավարար:

2.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «ԵՎՐՈՍՏՐՈՅ», «ՍՄ ՊՐՈԴԱԿՇՆ» և «ԳՈԼԴ ԼԱՅԹ» ՍՊԸ-ների կոնսորցիումին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ

(Հ. Մնացականյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակից «ԵՎՐՈՍՏՐՈՅ», «ՍՄ ՊՐՈԴԱԿՇՆ» և «ԳՈԼԴ ԼԱՅԹ» ՍՊԸ-ների կոնսորցիումին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Հ. Մնացականյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Մնացականյան

---------- Ն. Ղազարյան

---------- Ա. Հյուսիսյան

---------- Է. Առուստամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Գ. Հակոբյան